




Այստեղ դարձեալ յիշատակելու է մետա-բարոյագիտութեան ոլորտին մէջ յարուցուած երեք գլխաւոր բանավեճերը.-

- 1) Բանավեճ՝ ճանաչողականութեան եւ ոչ-ճանաչողականութեան միջեւ, ուր կ'արծարծուին նախ բարոյագիտութեան ճանաչելիութեան հարցը ապա բարոյական դատողութիւններու սխալականութեան հարցը:
- 2) Բանավեճ՝ իրապաշտութեան եւ հակա-իրապաշտութեան միջեւ, ուր նիւթ կը դառնայ՝ ենթակայական փափաքներէն ու պատկերացումներէն անդին, բարոյական առարկայական իրողութիւններու գոյութեան հարցը:
- 3) Բանավեճ՝ բարոյականութեան եւ ապաբարոյականութեան միջեւ, ուր կը քննարկուի ընդհանրապէս բարոյական դիրքաւորում ունենալու հարցը եւ անոր պատճառները:

